

ՄՅՈՒԴ ՄԵՐՈՒԻ ՀԱԿՈՒՅԱՆ
(ծննդյան 85-ամյակին)



2019թ. ապրիլի 17-ին լրացավ ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիայի Երկրաբանական գիտությունների ինստիտուտի (ԵԳԻ) Երկրաժամանակագրության և իզոտոպային հետազոտությունների լաբորատորիայի ավագ գիտաշխատող Հակոբյան Մյուզի ծննդյան 85 ամյակը:

Այս հակիրճ ակնարկի նպատակն է ծանոթացնել Հայաստանի երկրաբաններին այն զգալի ավանդի մասին, որն ունեցել է Մ.Հակոբյանը ապարառաջացման և հանքագոյացման մի շարք կարևոր ընդհանուր պրոբլեմների պարզաբանման

գործում և որոնք մինչև այսօր չեն կորցրել իրենց նշանակությունը: Դրա անհրաժեշտությունը առավել ցայտուն է ի հայտ գալիս, եթե նշենք, որ նրա ծննդյան 60 և 70 ամյակներին այդպիսի անդրադարձ չէր կատարվել և գիտական մամուլում նրա մասին որևէ տեղեկություն բացակայում է:

1958թ. ավարտելով ԵՊՀ Երկրաբանական ֆակուլտետը՝ Մ.Հակոբյանը անցնում է աշխատանքի Հայաստանի Երկրաբանական վարչությունում (1958-1967թթ.), որտեղ մասնավորապես Մեղրաձորի ոսկու հանքավայրի տարածքում, ակտիվ մասնակցում է որոնողա-հետախուզական աշխատանքներին:

1967թ. Մ.Հակոբյանը տեղափոխվում է ԵԳԻ Երկրաժամանակագրության լաբորատորիա: Այդ ժամանակից սկսվում է նրա առավել բեղմնավոր գործունեությունը:

Մ.Հակոբյանին հանձնարարվեց իրականացնել ստաբիլ իզոտոպների (թթվածին, ածխածին) ուսումնասիրությունը՝ նկատի ունենալով ապարառաջացման և հանքագոյացման պրոբլեմների պարզաբանման ընթացքում այդ ժամանակ հայտնաբերված նրանց հնարավորությունները: Այդ նպատակով նա գործուղվում է ՄՍՀՄ ԳԱ Երկրաքիմիայի և անալիտիկ քիմիայի ինստիտուտ (ГЕОХИ АН СССР), որտեղ հաջողությամբ յուրացնում է մասս-սպեկտրոմետրիայի մեթոդները և թթվածնի իզոտոպների ուսումնասիրության առաձնահատկությունները: Ունե-

նալով բացառիկ կոնստրուկտորական ունակություններ՝ նա նախագծեց և պատրաստեց իզոտոպային անալիտիկ աշխատանքների համար անհրաժեշտ բոլոր քիմիական սարքավորումները, որոնք իրենց հիմնական պարամետրերով գերազանցում էին արտերկրների հեղինակավոր լաբորատորիաներում օգտագործվող համապատասխան սարքերը:

1970 թվականներից ի վեր՝ ավելի քան 30 տարիների ընթացքում, նա իրականացրեց տարբեր ապարների և միներալների թթվածնա- և ածխաիզոտոպային հետազոտություններ, որոնց արդյունքում ձևակերպվեցին (հիմնականում համահեղինակությամբ), կարևոր եզրակացություններ ապարառաջացման, հանքագոյացման և նրանց կապակցվածության վերաբերյալ՝ առաջին անգամ հայտնաբերվեց և ապացուցվեց ծովային ջրի մասնակցությունը տոնալիտային մոդելի Cu-Mo պորֆիրային հանքավայրերի հիդրոթերմալ լուծույթների կազմի ձևավորման ընթացքում; պարզաբանվեց հանքառաջացման գործընթացի կապի բնույթը մագմայականությունը ներփակող միջավայրի հետ; ի հայտ բերվեց հարաբերակցությունը հանքագոյացման և Cu-Mo հանքավայրերի միներալների պարագենետիկ ասոցիացիաների միջև; գաբրո-գրանիտոիդային համալիրների առաջացման պետրոգենետիկական մեխանիզմների կարևոր դերը հանքագոյացման պրոցեսների ընթացքում:

Մ.Հակոբյանը բացառիկ աշխատունակությամբ և ֆիզիկական հնարավորություններով օժտված անձնավորություն էր, ձգտում էր բոլոր պարագաներում բացահայտել ի հայտ եկած հարցերի էությունը, թվում էր՝ նրա համար գոյություն չունեն անլուծելի պրոբլեմներ, նա միշտ պատրաստ էր ակտիվ մասնակցել լաբորատորիայում ծառացած տարաբնույթ խնդիրների լուծմանը:

Մ.Հակոբյանը շուրջ 25 տպագրված հոդվածների հեղինակ (համահեղինակ) էր, որոնք լույս են տեսել արտերկրի, միութենական, հանրապետական գիտական ամսագրերում և ժողովածուներում, ներկայացվել են գեկուցումների ձևով: Կլանված լինելով ամենօրյա աշխատանքով՝ նա չէր ձգտում ձևակերպել ստացված արդյունքները ատենախոսության տեսքով՝ չափազանց անտարբեր լինելով կոչումների և պարգևատրությունների նկատմամբ:

Մ.Հակոբյանը չափազանց հետաքրքիր մտահաղացումներ ուներ երկրաբանության տարբեր բնագավառներում ստաբիլ իզոտոպների կիրառման վերաբերյալ, սակայն 2008թ. հունվարի 26-ին նա անսպասելիորեն վախճանվեց:

Մ.Հակոբյանի բազմակողմանի գործունեությունը վկայում է՝ նա այն հետազոտողներից էր, ովքեր անվերապահորեն նվիրված էին գիտությանը:

ՀՀ ԳԱԱ թղթ.անդամ Ռ.Մելքոնյան